Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

342.8
Ֆ-16

Բոլշևիկներ բոլոր յերկիրներից միացեք

ՔԱՂԱՔՈՑԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ

ՀՐԱՀԱՆԳ

Հաստատված և ՀՍԽՀ կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության կողմից 1925 թ. 27-ին հոկտեմբերի

300
Ֆ.694-Zp

Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Գ.Ս.Ս.Ր.Հ. Публичная Библиотека
7/XI-1932
имени А. Мясницкая
Հ. ՍԱՄՍՈՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄ

Յերևան 1925 թ.

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Պատ. 669 Տիրաժ 3000

Ф-16

300
2694-ՀՐ

Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՊԵՏԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ս.Հ. Публичная Библиотека
7/XI-1922
Անվան Ա. Մեսրոպի
Ա. ՄԵՍՐՈՊԻ ԱՆՎԱՆ

1003
19893

Խոր. Սոց. Հան. Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեի «Խորհուրդների և խորհուրդների համագումարների ընտրության կարգի» վերաբերյալ 1925 թ. հոկտեմբերի 2-ին և

Անդրկովկասի ՍՖԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի «Անդրկովկասի ՍՖԽՀ սահմաններում խորհուրդների և խորհուրդների համագումարների, մինչև գավառակայինների, 1926 թվին ընտրություն կատարելու» վերաբերյալ 1925 թվի հոկտեմբերի 12-ին

Կայացրած վորոշումների հիման վրա

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն, ղեկավարվելով ԽՍՀ Միության ԿԳԿ-ի նախագահության «Խորհուրդների վերընտրության» վերաբերյալ 1925 թ. հունվարի 16-ի վորոշմամբ և հրահանգով,

Ի փոփոխումն ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի «Քաղաքային և գյուղական խորհուրդների և խորհուրդների գավառակային ու գավառական համագումարների» վերաբերյալ 1922 թ. հոկտեմբերի 2-ի հրահանգի, վորոշում է՝

Հրապարակել և առաջարկել Գործադիր

29 AUG 2013

35719

կոմիտեներին՝ ի ղեկավարություն հետևյալ հրահանգը։

ԳԼՈՒԽ 1

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Գյուղական և քաղաքային խորհուրդների և խորհուրդների գավառակային ու գավառական համագումարների կանոնավոր և ժամանակին ընտրություն կատարելու նպատակով կազմվում են գյուղական, գավառակային, գավառական, քաղաքային և կենտրոնական ընտրական հանձնաժողովներ։

Ընտրական հանձնաժողովները պարտավոր են խստիվ հետևել, վոր պահպանվեն ընտրությունների որենքով սահմանված կանոններն ու նորմաները, վոր իշխանության տեղական մարմինները չը խախտեն այդ կոնոններն ու նորմաները և հետևեն նաև, վոր ընտրողների վրա ճընշում գործ չդրվի խորհուրդների ընտրությունների ժամանակ։

2. Կենտրոնական ընտրական հանձնաժողով նշանակում է ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահությունը ԿԳԿ-ի անդամներից՝ 9 հոգուց բաղկացած։

3. Գավառական ընտրական հանձնաժողովները կազմվում են 7 հոգուց, բաղկացած՝ նախագահից, վորին ընտրում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեն, գավառական գործադիր կոմիտեի մի ներկայացուցչից և 5 անդամից գավառի բանվորական և գյուղացիական կազմակերպություններից։

4. Գավառակային ընտրական հանձնաժողովները կազմվում են 5 հոգուց, բաղկացած—նախագահից, վորին ընտրում է գավառական գործադիր կոմիտեի պլենումը, մի անդամ գավառակային գործադիր կոմիտեից և 3 հոգի բանվորական ու գյուղացիական կազմակերպություններից։

5. Գյուղական ընտրական հանձնաժողովների կազմն է՝ նախագահ, վորին ընտրում է գավառակային գործադիր կոմիտեն, գյուղական խորհրդի մի ներկայացուցիչ և մի ներկայացուցիչ՝ վորին ընտրում է գյուղի ընտրողների ընդհանուր ժողովը։

6. Քաղաքային ընտրական հանձնաժողովները—ԿԳԿ-ի վորոշմամբ քաղաքային խորհուրդ ունեցող բոլոր քաղաքներում—կազմվում են 5 հոգուց—նախագահ, վորին ընտրում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և ներկայացուցիչներ՝ մեկը համապատասխան քաղաքային խորհրդից, մեկը Արհեստակցական Միություններից, մեկը

Կարմիր բանակից և մի ներկայացուցիչ-վորին ընտրում և աշխատավոր կանանց համաքաղաքային պատգամավորական ժողովը:

7. Ընտրական հանձնաժողովներն իրենց համար հատուկ տեխնիկական ապարատ չեն ստեղծում, այլ ղեկավարում են իրենց վրա դրված պարտականությունները կատարելու համար պատշաճ գործադիր կոմիտեյի կամ գյուղական խորհրդի ապարատից:

8. Ընտրական հանձնաժողովի անդամներն իրենց աշխատանքի համար հատուկ վարձատրություն չեն ստանում:

9. Ընտրական հանձնաժողովների վրա դրվում են հետևյալ պարտականությունները.

ա) Հսկողություն, վոր ընտրությունը պատշաճ վայրում որինական կարգով և ժամանակին կատարվի:

բ) Ստորագրություն ընտրական հանձնաժողովների և ընտրությունների համար նրանց լիազորած անձանց գործունեության ղեկավարություն:

գ) Ընտրության ընթացքի մասին տեղեկություններ և այդ խնդրի վերաբերյալ ամբողջ նյութը պատշաճ գործադիր կոմիտեին ներկայացնելը:

դ) Գործադիր կոմիտեներին առաջարկություն անելն ստորագրություն ընտրական հանձնաժողովներն արձակելու և նրանց տեղերին անդամներին մերժելու մասին:

յե) Ստորագրություն ընտրական հանձնաժողովներից իրենց կատարած աշխատանքների հաշվետվությունը պահանջելը:

զ) Ստորագրություն ընտրական հանձնաժողովների գործողությունների դեմ տված բողոքների ու դանդատների քննությունը:

է) Ընտրական ժողովներին նախագահելու համար լիազորներ նշանակելը:

ը) Ընտրական ծանուցագրեր ուղարկելը:

թ) Ընտրական իրավունքներից զրկված անձանց ցուցակներ կազմելը:

ԳԼՈՒԽ 2

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՑՈՒՑԱԿՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10. Գյուղական և քաղաքային խորհուրդներն ընտրական իրավունքից զրկված անձանց մշտական անվանական հաշվառում են կատարում:

ԾԱՆՈԹ.—Գյուղական վայրերում հաշվառումը կատարվում է ամեն մի գյուղի համար առանձին:

11. Ընտրական իրավունքներից զրկ-

ված անձանց հաշվառումը կատարվում է փաստաթղթերի բնույթ ունեցող տեղեկությունների հիման վրա:

ա) Ընտրական իրավունքներից դատավճռով զրկված անձանց վերաբերմամբ՝ դատավճիռների կամ պատշաճ դատական մարմնի տեղեկությունների հիման վրա:

բ) Շահառության նպատակով վարձու աշխատանք կիրարկող, այլ և անաշխատ հասույթով ապրող անձանց վերաբերմամբ՝ նրանց հասութահարկ և արհեստահարկ վճարած լինելու մասին ֆինանսական մարմինների տված տեղեկությունների, ապահովագին վճարած լինելու մասին՝ ապահովագրական դրամարկղների տված տեղեկությունների հիման վրա:

գ) Առևտրով զբաղվող անձանց վերաբերմամբ՝ նրանց պատենտ առած լինելու մասին ֆինանսական մարմինների տված տեղեկությունների հիման վրա:

դ) Խելագարների կամ հոգեկան հիվանդների վերաբերմամբ՝ առողջապահության մարմինների արձանագրությունների կամ այդ արձանագրությունների վավերացրած պատճեններին—նրանց խելագար կամ հոգեկան հիվանդ ճանաչելու մասին:

յե) Նախկին վոստիկանության և ժանդարմերիայի ծառայողների և գործակալ-

ների սույն հրահանգի 21 հոդ. «յե» կետում մատնանշված բոլոր անձանց վերաբերմամբ՝ վարչական մարմինների կամ գավառակային գործադիր կոմիտեների ու գյուղական խորհուրդների տված տեղեկությունների հիման վրա:

12. Ընտրական հանձնաժողովը գյուղերում և քաղաքներում ընտրական իրավունքներից զրկվածների՝ իր կազմած ցուցակի մի օրինակը հղում է տեղական խորհրդին, իսկ մյուսը՝ վերադաս ընտրական հանձնաժողովին:

13. Ընտրական հանձնաժողովներն ընտրական իրավունքներից զրկված անձանց ցուցակները հրապարակում են վոչուչ՝ քան համապատասխան խորհրդի ընտրությունից 20 որ առաջ կախ տալով, հայտարարելով ժողովներում, մամուլի մեջ և այլն, վորի մասին իրավունքներից զրկվածներին տեղեկություն է տրվում նույն ժամանակամիջոցում, այսինքն՝ ընտրություններից 20 որ առաջ:

ԳԼՈՒԽ 3

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿԵԼՈՒ ԴԵՄ ՏՎԱԾ ԳԱՆԳԱՏՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

14. Ընթացիկ ընտրությունների ժամանակ հանձնաժողովի վորոշմամբ ընտ-

բական իրավունքից զրկված անձինք կարող են գանգատ տալ այդ վորոշման դեմ՝ ցուցակը հրապարակելուց հետո մի չորեքշաբթվա ընթացքում

15. Քաղաքացիները նախորդ հոդվածում հիշված ժամանակի ընթացքում գանգատները տալիս են ցուցակը կազմող ընտրական հանձնաժողովին:

16. Ընտրական հանձնաժողովը գանգատ ստանալուց հետո՝ 3 որվա ընթացքում պարտավոր է այն քննել ըստ էության և գանգատը չբավարարելու դեպքում՝ ուղարկել այն, բոլոր նյութերի ու լեգրակացությունների հետ միասին, վերադաս ընտրական հանձնաժողովին՝ հայտնելով միաժամանակ գանգատավորին:

17. Գավառակային ընտրական հանձնաժողովը գյուղական ընտրական հանձնաժողովների վորոշումների դեմ տված գանգատներն ստանալուց հետո քննում է 48 ժամվա ընթացքում: Եթե գավառակային ընտրական հանձնաժողովը գանգատը բավարարում է, ուղարկում է գյուղական ընտրական հանձնաժողովին՝ գանգատավորին հայտնելու համար: Եթե գավառակային ընտրական հանձնաժողովը գանգատը մերժում է, գանգատն ուղարկվում է գավառական ընտրական հանձնաժողովին:

18. Գավառական ընտրական հանձնաժողովները գավառակային հանձնաժողովների վորոշումն ստանալուց հետո՝ 48 ժամվա ընթացքում, պարտավոր են քննել գանգատը՝ կամ հաստատել գավառակային ընտրական հանձնաժողովների վորոշումը, կամ բավարարել գանգատը: Գավառակային ընտրական հանձնաժողովի վորոշումը հայտարարվում է բոլոր համապատասխան ստորադաս ընտրական հանձնաժողովներին ու գանգատավորին:

19. Քաղաքների բնակիչների գանգատները տրվում են քաղաքային ընտրական հանձնաժողովին, վորը պարտավոր է գանգատը քննել և յեթե չի բավարարում այն, ուղարկում է գավառային ընտրական հանձնաժողովին: Վերջինիս վորոշումը հայտարարվում է ստորադաս ընտրական հանձնաժողովներին և գանգատավորին:

20. Գավառական ընտրական հանձնաժողովների վորոշումների դեմ գանգատները տրվում են Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովին:

ԾԱՆՈԹ.—Ընտրական իրավունքներից անկանոն կերպով զրկելու նկատմամբ վերջին վճռաբեկ ատյանն է հանդիսանում Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահությունը:

ԳԼՈՒԽ 4.

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

21. Ընտրական հանձնաժողովներն ընտրական իրավունքից զրկված անձանց ցուցակները կազմելիս և ստուգելիս՝ պետք է ղեկավարվեն ՀՍԽՀ Սահմանադրության 70 և 71 հոդվածներով:

ՀՍԽՀ Սահմանադրության 71 հոդվածի համաձայն՝ չեն կարող ընտրել և ընտրվել.

ա) Վարձու աշխատանք չահագործողները:

բ) Անաշխատ հասույթով ապրողները:

գ) Մասնավոր առևտրականներն ու առևտրական միջնորդները:

դ) Հոգևորականներն ու կրոնական պաշտամունքի հոգևոր սպասավորողները:

ե) Տապալված կառավարությունների անդամներն ու քաղաքական հետախուզության ու վոստիկանության պատասխանատու աշխատակիցները, խմբապետներն ու մաուզերիստները:

զ) Սահմանված կարգով ակարամիտ և խելագար ճանաչվածները, այլ և խնամակալության տակ գտնվողները:

ե) Որենքով կամ դատավճռով իրավունքներից զրկվածները:

22. Չեն զրկվում ընտրական իրավունքներից հետևյալ անձինք.

ա) Գյուղատնտեսությամբ պարապող և վարձու աշխատանքից ոգտվողներն այն դեպքում, երբ վարձու աշխատանքի կիրարկությունը տեղի չ ունենում 1925 թ. հունիսի 9-ի «Գյուղացիական տնտեսություններում ժամանակ վարձու աշխատանքի կիրարկության պայմանների վերաբերյալ կանոնների» համաձայն:

բ) Զրաղացների, ձավարագործարանների, ձիթահանների, դարբնոցների և այլ նման ձեռնարկությունների տերերն ու վարձակալները, վորոնք մի մշտական չափահաս բանվորից կամ յերկու աշակերտից ավելի չունեն, յեթե իրենք անձամբ մասնակցում են աշխատանքներին:

գ) Այն անձինք, վորոնք տոկոսներ են ստանում ավանդադրամներից և պետական, կոմունալ ու կոոպերատիվ փոխառություններից, յեթե նրանք զրկված չեն ընտրական իրավունքներից ՀՍԽՀ Սահմանադրության 71 հոդ. նախատեսված այլ հիմունքներով:

դ) 1-ին կարգի պատենտ առնող անձինք (չրջիկ առևտրականները), յեթե զրկված չեն ընտրական իրավունքներից ՀՍԽՀ Սահմանադրության 71 հոդ. նախատեսված հիմունքներով:

յե) ՀՍԽՀ Սահմանադրության 71 հոդ. «ա», «բ», «գ», «դ» և «յե» կետերի համաձայն ընտրական իրավունքից զրկված անձանց ընտանիքների անդամները, յեթե նրանք նյութական կախում չունեն այն անձերից, որոնք ընտրական իրավունքից զրկված են իրենց արհեստի շնորհիվ:

ԾԱՆՈԹ.—1. Ըստ պայմանագրի յեկեղեցի կամ յեկեղեցական դուրք ընդունող անձինք, յեկեղեցական-ծխական խորհուրդների կամ համայնքների անդամները և պաշտամունքի վերաբերյալ այլ պարտականություններ կատարողները, որինակ, յեկեղեցական-ծխական խորհրդի կամ համայնքի նախագահները, յերգեցիկ խմբերի կառավարիչները և այլն, ընտրական իրավունքից չեն զրկվում:

ԾԱՆՈԹ.—2. Տիրացուները և յեկեղեցական յերգիչները զրկվում են ընտրական իրավունքներից այն դեպքում, յերբ նրանց ապրուստի հիմնական աղբյուրը կրոնական ծիսակատարություններն են:

ԳԼՈՒԽ 5.

ԸՆՏՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

23. Խորհուրդների անդամների ընտրությունը տեղի յե ունենում ընտրական ժողովներում:

24. Ընտրական ժողովները գումարում են ընտրական հանձնաժողովը կամ նրա լիազորները, ժողովի և ընտրության որվա ու տեղի մասին հայտարարելով բնակչության վոչ ուշ, քան հինգ որ առաջ:

25. Քաղաքներում ու քաղաքատիպ և գործարանային բնակավայրերում ընտրական ժողովները գումարվում են ըստ արտադրական կամ արհեստակցական միավորների (ձեռնարկությունների, հիմնարկությունների և արհեստակցական միությունների):

Այն քաղաքացիների համար, որոնք ձեռնարկության մեջ չեն կամ արհեստակցական միության անդամ չեն, որինակ, անտանդործների, տանտիկինների, կառապանների և այլն, ընտրական ժողովները գումարվում են ըստ բնակության միավորների (քաղաքաշրջան, քաղաքամաս և այլն):

26. Ընտրական ժողովներում կարող են ներկա լինել միայն ընտրական իրավունք ունեցողները:

27. Ընտրական ժողովները բաց են անում ընտրական հանձնաժողովների լիազորված անդամները և ղեկավարում են ընտրվող նախագահությունը, յերեք հոգուց բաղկացած, ընտրական հանձնաժողովի լիազորի նախագահությամբ:

28. Ընտրական ժողովը բացվելուց հետո նախագահը պարտավոր է՝

ա) Ծանոթացնել ժողովականներին ընտրության կարգին, վորի համար նա կարդում է ՀՍԽՀ Սահմանադրության 51, 52, 70 և 71 հոդվածները՝ խորհուրդների ներկայացուցչության նորմայի և ընտրական իրավունք ունեցող ու ընտրական իրավունքներից զրկված անձանց վերաբերյալ, այլ և սույն հրահանգի 24—38 հոդվածները:

բ) Հայտարարել ընտրողների և ընտրելու յեկածների թիվը:

գ) Հայտարարել ընտրական ժողովից առաջ և ընտրական ժողովում ստացված ցուցակներն ու առանձին թեկնածուների անուններն ու ազգանունները, մատնանշելով թե ո՞ւմից են ստացված այդ ցուցակները:

29. Ընտրության ժամանակ քվեարկությունը կատարվում է կամ ցուցակներով, կամ անհատական թեկնածության կարգով, իրեն՝ ժողովի վորոշման համաձայն:

30. Ընտրական հանձնաժողովները և նրանց լիազորներն իրավունք չունեն իրենց կողմից ընտրողներին վո՛չ առանձին թեկնածուներ և վո՛չ թեկնածուների ցուցակներ առաջարկելու:

ԾԱՆՈԹ.— Ցուցակներով քվեարկություն կատարելն արգելք չի հանդիսանում համապատասխան ցուցակների առանձին թեկնածուներին մերժելու:

31. Ընտրությունը կատարվում է բաց քվեարկությամբ: Ընտրված են համարվում ձայների պարզ մեծամասնություն շահած անձինք:

ԾԱՆՈԹ.—1. Յեթե քվեարկում են ամբողջ ցուցակներ, ընդունված է համարվում ձայների պարզ մեծամասնություն շահած ցուցակը:

ԾԱՆՈԹ.—2. Կրկնաքվեարկության ժամանակ թույլ է տրվում նոր թեկնածուներ առաջարկել:

32. Ցուրաքանչյուր ժողով՝ բացի պատգամավորներից (խորհուրդների անդամներից), ընտրում է նաև փոխանդամներ պատգամավորների թվի մեկ յերրորդի չափով: Փոխանդամներն ընտրվում են առանձին քվեարկությամբ:

33. Ընտրական ժողովի ընթացքի մասին արձանագրություն է կազմվում սահմանված ձևով. այդ արձանագրությունն ստորագրում է ընտրական ժողովի նախագահությունը և ընտրական հանձնաժողովի լիազորը:

34. Բոլոր գործերն ու փաստաթղթերն ընտրության արդյունքի տրվում են ընտրու-

Т 2893
ՀԱՅԿՍՍՀ ԳՐԱԿԱՆ ... ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА
17 XI-1922
имени А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

թյունն ավարտելուց հետո 7 որվա ընթացքում, գրավոր, ընտրությունը ղեկավարող հանձնաժողովին, վոր պարտավոր է իր ստացած բոլոր դիմումներն ու գանգատները իր բացատրությունների հետ միասին, գանգատները ստանալուց հետո 3 որվա ընթացքում ուղարկել վերադաս ընտրական հանձնաժողովին: Վերադաս ընտրական հանձնաժողովը պարտավոր է քննել գանգատները՝ ստանալուց հետո 5 որվա ընթացքում և իր վորոշման մասին հայտնել համապատասխան գործկոմներին ու գանգատավորին:

35. Ընտրական հանձնաժողովներն իրենց աշխատանքները վերջացնելուց հետո ընտրության վերաբերյալ բոլոր նյութերը հանձնում են համապատասխան խորհրդին կամ գործադիր կոմիտեին:

36. Ընտրությունը բեկանելու դեպքում նոր ընտրությունը կատարվում է սույն հրահանգով սահմանված կարգով:

37. Նոր ընտրություն կատարելու համար համապատասխան ընտրական հանձնաժողովի նոր կազմ է նշանակվում:

38. Ընտրությունը բեկանելու առիթ և հանդիսանում ՀՍԽՀ Սահմանադրության և սույն հրահանգի խախտումը. ընտրությունը բեկանելու մասին հայտարարվում է ի գիտություն ընդհանրության՝ կամ տեղական մամուլի մեջ հրապարակելով, կամ ընտրողների ժողովներում:

ԳԼՈՒԽ 6.

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ ԵՎ ԳԱՎԱՌԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

39. Խորհուրդների գավառակային և գավառական համագումարներ հրավիրում են համապատասխան գործադիր կոմիտեները՝ խորհուրդների գավառակային և գավառային համագումարների կանոնադրությամբ սահմանված կարգով:

40. Համագումարների պատգամավորների ընտրության և նրանց լիազորությունների կանոնավորությունն ստուգելու համար խորհուրդների համագումարներն ընտրում են մանդատային հանձնաժողովներ:

41. Խորհուրդների համագումարները մանդատային հանձնաժողովների զեկուցումների հիման վրա վորոշումներ են անում՝ համագումարի համար կատարված ընտրությունների կանոնավորության և պատգամավորների իրավազորության մասին:

ԾԱՆՈԹ.— Վերընտրվող գործադիր կոմիտեի այն անդամները, վորոնք համագումարի պատգամավոր չեն, համա-

դումարում խորհրդակցական ձայնի իրավունք են վայելում։

42. Խորհուրդների համագումարի նախագահության ընտրության կարգը վորոշվում է խորհուրդների համապատասխան համագումարների կանոնադրությամբ։

43. Խորհուրդների համագումարները կարող են ընտրել իրենց նախագահությունների, իրենց գործադիր կոմիտեների անդամ, նաև վերադաս համագումարների համար իրենց ներկայացուցիչ վո՛չ միայն այդ համագումարների անդամներին, այլ և առհասարակ ընտրական իրավունք վայելող բոլոր քաղաքացիներին՝ անկախ նրանց բնակության կամ գործունեության վայրից։

44. Համագումարի գրագրությունքներն սկսվելուց հետո իշխանության գործադիր մարմինը շարունակում է մնալ նախկին կազմ ունեցող գործադիր կոմիտեն, վորի ֆունկցիաները դադարում են նոր գործադիր կոմիտեյի առաջին նիստը գումարվելուց հետո։

45. Խորհուրդների համագումարն ավարտելուց հետո գումարվում է նորընտիր գործադիր կոմիտեյի կազմակերպչական նիստը, կոմիտեյի նախկին կազմի հետ միասին. այդ նիստում ընտրվում են գործ-

կոմի նախագահն ու նախագահությունը, այլ և նրա բոլոր բաժինների վարիչները։

46. Խորհուրդների համագումարների նիստերի արձանագրությունները մնում են համապատասխան գործադիր կոմիտեների գործերում, իսկ արձանագրությունների պատճենները, համագումարի և գործադիր կոմիտեների անդամների լրացրած քարտերի հետ միասին ուղարկվում են Կենտգործկոմին, վերընտրությունների կամպանիայի ընթացքի և արդյունքների հաշվառության վերաբերյալ հրահանգների կարգով։

47. Գործադիր կոմիտեյի նոր կազմի ընտրությունից հետո գործադիր կոմիտեյի նախկին կազմը բոլոր գործերն ու գույքը հանձնում է նորընտիր գործադիր կոմիտեյին, վորի մասին արձանագրություն է կազմվում՝ հանձնող և ընդունող գործադիր կոմիտեների ստորագրություններով։ Այս արձանագրությունը պահվում է համապատասխան գործադիր կոմիտեյի գործերում։

48. Ընտրական կամպանիայի ընթացքի և արդյունքների հաշվառության համար կազմվող տեղեկագրի ձևը սահմանվում է յուրաքանչյուր տարի Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի կողմից։

ԳԼՈՒԽ 7.

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

49. Գյուղական վերստուգիչ հանձնաժողովները ընտրվում են գյուղական խորհրդի ընտրության հետ միաժամանակ և միևնույն ընտրական ժողովներում՝ յուրաքանչյուր անդամի և յերկու փոխանդամի կազմով:

50. Վերստուգիչ հանձնաժողովի անդամ չեն կարող ընտրվել համապատասխան խորհրդի կամ գործկոմի անդամները:

51. Գյուղական վերստուգիչ հանձ. անդամների ընտրությունը կատարվում է խորհրդի անդամների ու փոխանդամների ընտրությունից անջատ:

ԳԼՈՒԽ 8.

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԵԿՄԱՆ, ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

52. Ընտրությունը բեկանվում է հետևյալ դեպքերում.

ա) Յեթե ընտրությանը մասնակցողների թիվն ընտրողների 35 տոկոսից պակաս է.

բ) Յեթե ընտրությունը ղեկավարող մարմինների ապօրինի գործողություններ դեմ քաղաքացիների տված դանդատները հիմնավոր են ճանաչվում:

53. Հիշյալ պատճառներով ընտրությունը կարող է բեկանվել՝

ա) Ամբողջովին, այսինքն՝ խորհրդի անդամների ամբողջ կազմի վերաբերմամբ.

բ) Մասամբ, այսինքն՝ խորհրդի առանձին անդամների վերաբերմամբ առանձին ընտրական շրջաններում:

54. Ընտրությունը բեկանվում է ամբողջովին, յեթե պատգամավորների կիսից ավելին ընտրված է սույն հրահանգի կանոնները խախտելով: Իսկ յեթե կանոնազանցությունը տեղի յե ունեցել միայն մեկ կամ մի քանի ընտրական շրջաններում, ընտրությունը բեկանվում է միայն այդ ընտրական շրջանների վերաբերմամբ, իսկ մնացյալ շրջանների ընտրությունները համարվում են օրինական:

55. Կարելի յե բեկանել թե՛ ամբողջ Հանրապետության սահմաններում, և թե՛ վորոշ վայրերում կատարված ընտրությունները:

56. 52-րդ հոդ. մատնանշված պատճառներով ընտրությունն ամբողջովին բեկանելու խնդիրը վճռում են վերադաս գործադիր կոմիտեները, իսկ մասնակի բեկանման խնդիրը՝ համապատասխան գործադիր կոմիտեները:

57. Նոր ընտրություն անելու համար ընտրությունը բեկանելու դեպքում՝ սույն հրահանգի 3–5 հոդվածներում մատնանշված կարգով համապատասխան ընտրական հանձնաժողով է կազմվում:

58. Ընտրողների կողմից պատգամավորների յետ կանչելու դեպքում այդ անդամներին փոխարինում են նույն ընտրական շրջանի փոխանդամները, իսկ փոխանդամներ չլինելու դեպքում՝ առանձին անդամների լրացուցիչ ընտրություն է նշանակվում:

59. Առանձին անդամների մահվան բնակավայրը փոխելու, ընտրական իրավունքները կորցնելու և այլն պատճառներով անդամությունից հեռանալու դեպքում նրանց փոխարինում են միևնույն ընտրական շրջանում ընտրված փոխանդամները, և միայն փոխանդամները չլինելու դեպքում լրացուցիչ ընտրություն է կատարվում:

60. Յեթե 58 հոդ. մատնանշված պատճառներով խորհրդի կամ գործկոմի անդամների ամբողջ կազմի ավելի քան կիսի լրացուցիչ ընտրություն պիտի կատարվի, այդ դեպքում խորհրդի անդամների ամբողջ կազմի վերընտրություն պիտի կատարվի սահմանված կարգով, որ հաստատում է վերադաս գործադիր կոմիտեն:

61. Մասնակի լրացուցիչ ընտրությունը

հաստատում են համապատասխան գյուղական կամ քաղաքային խորհուրդները կամ խորհուրդների համագումարները:

62. Գործադիր կոմիտեների վերընտրությունը սահմանված ժամանակից շուտ կարող են կատարել խորհուրդների համապատասխան արտակարգ համագումարները, որը հրավիրվում են ՀՍԽՀ Սահմանադրության համապատասխան հոդվածների կարգով:

63. Գործադիր կոմիտեյի կիսից ավելին նրա կազմից դուրս գալու դեպքում գործադիր կոմիտեյի ամբողջ կազմի ընտրություն է կատարվում:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահի տեղակալ
Հ. ԱԶԱՏՅԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քարտուղար՝
Հ. ՏԱՏՅԱՆ

Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՊԵՏԻԿԱ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.R.A. Публичная Библиотека
7/XI--1922
имени А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0207868

35. 719

Фрит. № 227 р.